



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ՏԵՐՐԷՆ - ԽՄՐԱԳՐԱՊԵՏ

Հ. ՐԱԿԻԴԱԿ

Գ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 70

1899 ՕԳՈՍՏՈՍ 7

H. Polad, Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Turquie Constantinople

در علیّه ده بغچه قیوسنده اسکی ضبطیه ده
۱۹ نومرو لی دکانده (حانراکیداک) «مجموعه علوم»
غزته سی سر محرری (بولاد) افندی به

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական. — Ձեկըց :

Գ. Խանյանց. — Աղդադրական :

Պլան և Գեղարվեստական. — Կրթական :

Գ. Խանյանց. — Գրականական :

Ղ. Բալաս. — Հոգաբարձական :

Գ. Տ. Մեհրաբյան. — Մեղուարուծական :

Կեհար. — Պատասխան վարձկան, պաշտպանին :

Ղ. Բալաս. — Շերամարուծական :

Ղ. Բալաս. — Արհեստագիտական. — Պողպատ :

Թերթթին Հանրագիտակի. — Ուղեւորութիւն երկրիս

կեդրոնը (Ժիւլ Վերն)

Թղթակցութիւն, Աղդ եւ այլն :

Թուրքիոյ համար տարեկան 50 դր. .
» » վեցամսեայ 26 »
» » եռամսեայ 13 »
Արտասահման տարեկան 15 ֆրանք
կամ 6 րուպլի

Հատը 40 փարայ

Դրամի տեղ կ'ընդունուի նամակի դրոշ-
մաթուղթ, 50 հատ 1 դր. նոց դրոշ-
մաթուղթ 50 դր. ի փոխարէն :

Տպագրութիւն «ԱՍԸՐ»

Կ. Պոլիս, Պապ-Ալի ճատոնէսի, Թիւ 4

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ կը ծանուցանէ որ, Ա. Գ. Օհաննէս էֆ. Բալ- շանճեան, իր բարեգործութիւններով հան- րածանօթ Ամերիկացեայ Հայազգի վաճա- ռականը, մէկ օրինակ «Հանրագիտակ» նուիրած է՝ էրզրումի Կարմիր Վանքին:

Նոյնպէս շնորհակալութեամբ կը ծանու- ցանենք որ, Ա. Գ. Տիկին Վ. Տգդ. Բ. Չիլին- կիբեան բարեհաճած է մէկ օրինակ «Հանրա- գիտակ» նուիրել Կիւրիւնի Ազգ. վարժարանին:

Վե՛նե՛Ցիկ. — «Բազմավէպ». — Հաճեցէք խաչիկ էֆ. Տ. Յակոբեանի ղրկուելիք «Բազ- մավէպ»ները խմբագրութեանս յղել, ներկայ տարուոյս առաջին թիւէն սկսեալ:

Վե՛նե՛Ցիկ. — Վեր. Հ. Ս. Երամեան. — Ստացած ենք նամակնիդ. դրամը ղրկուած է ֆրանս. թղթաբերով. բառգիրքերը ստա- ցած ենք. յանձնարարութիւննիդ կը կա- տարուի:

ՊԱՐՏԻՉԱԿ. — Գ. Տ. Մեսրոպեան էֆ. — Ստացանք նամակնիդ:

ԵՐՁՆԿԱ. — Ս. Ա. — Ստացանք 70 դահե- կան, որու 50ը հաշուեցինք Պօղոսեան Տիգ- րան էֆ. ի բաժնեգինին:

ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մ. Չ. — Բարեկամ, ա- լելի լաւ չէ՞ որ գործնականապէս և արիա- քար գոհացում տաք: Չեր գրածներ արդեօք «Հանրագիտակ» ի գրաշարը կամ տպարանը իբրեւ դրամ կ'ընդունին, քանի որ խնդիրը դրամի վրայ է:

ԱՏԱԲԱՉԱՐ. — Գործակալ. — Ստացանք նամակնիդ և 170 դահեկան:

Բ Ա Ռ Գ Ի Ր Ք

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Ե Ի

ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Յ Օ Ր Ի Ն Ե Գ

Հ. Մանուէլ Վ. Բաջունի

Գին 60 ֆրանք

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԴԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԱՆՈՅԻ ՀՌԶԱԿԱՒՈՐ ԲՈՐԻՉԲԱ ՏԱՆ Կեդրոնատեղի

Յ. և Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ Եղբայր Դեղարան Ի Չ Մ Ի Տ,

ուր կը գտնուի նաեւ շերամի հունտի պատրաստութեան համար ամէն տեսակ պիտոյք, դիւրամատչելի գներով:

Ծանօթ. — Մանրագիտակներու տե- սակներուն և գիներուն վրայ փափա- քողներու, մանրամասն տեղեկութիւն կը տրուի թղթակցութեամբ:

Ս Ա Ն Ա Ս Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն
ԺԹ ՏԱՐԵՇՐՁԱՆ 1899—1900

Վարժարանիս ժԹ տարեյշջոնը կը սկսի յառաջիկայ (1899) սեպտեմբեր 1ին և նորեկ աշակերտներու մուտքի քննու- թիւնները տեղի կ'ունենան օգոստոս 30ին և 31ին, իսկ դասերը կանոնաւո- րապէս կը սկսին սեպտեմբեր 1ին:

Թոշակաւոր աշակերտներու ընդու- նելութեան պայմաններուն և ուրիշ տե- ղեկութեանց համար ծնողք կամ պաշտ- պաններ կրնան հիմակուլնէ դիմել Պո- լիս՝ Ազգ. Պատրիարքարան և կամ էր- զրում վարժարանին տեսչութեան:

Յառաջիկայ տարուան համար ճրի աշակերտներու ընդունելութիւնը արդէն կատարուած ըլլալով, այդ մասին ո՛ր և է դիմում առանց հետեւանքի պիտի մնայ:

ԿՆԻՔ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعه علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳՐԱՊԵՏ

Գ. Ռ. Ո. Ս. Ց

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 70

1899 ՕԳՈՍՏՈՍ 7

Զ Ե Կ Ո Յ Ց

Այս թուէն սկսեալ, «Հանրագիտակ» պիտի զբաղի նաեւ, բայց ի իր սովորական նիւթերէն, «Ազգագրական», «Բանասիրական» ու «Լեզուաբանական» ուսումնասիրութիւններով: Տոհմային տեսակէտով, ամէն խելահաս անձնաւորութիւններ աղէկ գիտեն թէ ո՞ր աստիճան կարեւոր, չահեկան եւ օգտակար են անոնք. ուստի՝ հարկ չենք դառնորդ երկար բացատրութեանց մէջ մտնել. բայց կարեւոր կը սեպենք այժմէն յայտարարել թէ այդ ճիւղերուն համար մասնաւորապէս պիտի աշխատակցին կարող, ձեռնհաս եւ գրական հրապարակի վրայ արդէն իսկ հանրածանօթ անձեր:

Աւելորդ է ըսել թէ խմբագրութեան նպատակն է ամէն կերպով «Հանրագիտակ»ը ժողովրդի օգտակար հանդիսացնել, եւ անոր ուղղութիւնով, քանզի գրական եւ գործնական կեանքի մը գաղափարը հաստատել ժողովրդի մտքին մէջ: Իրաւ է թէ մեր բաժանորդներէ շատեր կը փափաքին եւ կը պահանջեն որ «Հանրագիտակ» միայն գիտական, արհեստական եւ երկրագործական

թերթը ըլլայ, բայց ամէն անգամ այդ պահանջումներուն ալ պարտաւորած ենք սա միեւնոյն պատասխանը տալ թէ դժբախտաբար մեր մէջ չունինք տակաւին բաւականաչափ թուով այդ ճիւղերու օգտակարութիւնը հասկցող, եւ անոնցմէ շահագրգռուող ընթերցողներ: Հարկ չի կայ ուրեմն այլ եւս կրկնել թէ մեր թերթին մէջ հիւրնկալելով մեր ուղղութենէն դուրս նիւթեր, նպատակնիս է ժողովրդի ամէն դասակարգի ճաշակին քիչ շատ յորմարցնելով թերթիս ուղղութիւնը, բաժանորդ շատցնել, որպէս զի թերթը ապրի: Ահա մեր այս իրապէս գոհողութիւններն երբ դնահատուին, եւ երբ պէտք եղած քաջալերը դտնենք, մանաւանդ երբ Ազգագրական, Բանասիրական եւ Լեզուաբանական ուսումնասիրութիւններով հետաքրքրուող ազգայինք ալ հաճին քաջալերել զմեզ, այսինքն՝ բացէ ի բաց ըսելով, եթէ քիչ ատենուան մէջ զգալի կերպով մեր բաժանորդաց թիւը շատնայ, մենք ալ այն ատեն թերթիս 50 շաբաթէն բաժնեգրին անփոփոխ պահելով հանդերձ, 8 էջի յաւելում մը պիտի ընենք անոր վրայ: Այս կերպով պիտի կրնանք մեր բաժանորդաց ամէն դասակարգին փափաքանաց ալ հաւասարապէս գոհացում տալ:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

«Բիւրակն»-ի 30րդ թուով Գ. Անդրէասեան էֆ. ի «Անհատականութիւնը մեր մէջ» յօդուածին Ա. մասը հրատարակուեցաւ, իբր ընդդիմախօսութիւն Պր. Գ. Վանցեանի «Մուրճ»-ի 1897ի համարներէն մէկին մէջ այս նիւթին վրայ գրածին:

Պր. Վանցեանի սոյն գրուածքը կարելի չեղաւ աչքէ անցընել այս պահուն, միայն Պր. Անդրէասեանի յօդուածէն դատելով՝ առաջինն ըսել ուզած է թէ՛ Անհատականութիւնը շատ զարգացած և թէ՛ տոհմ. առանձնայատկութիւն մըն էր Հայոց մէջ:

Պր. Վանցեանի այս եզրակացութիւնը թէ՛ութեամբ կրնանք ընդունիլ. իսկ ազգագրորէն, պատմաբանօրէն հաստատուն կըռուան մը չունինք, գիտական գետնի մը վրայ չենք գտնուիր, եթէ համարիտ ըլլանք Գ. Անդրէասեան էֆ. ի թէ՛ Հայոց մէջ Անհատականութիւնն արդի արեւելեան ժողովուրդներու յատուկ ցեղային արեւակցութեան (=groupe ethnique) ու ընտանեկան արեւակցութեան, տոհմերու (=Clan) վրայ հիմնուած էր:

Իրաւ է որ մենք ժողովրդին վարած կեանքին մեծ կարեւորութիւն կու տանք՝ հինը ուսումնասիրելու համար, սակայն ստորձան մը: Նորն ո՛չ թէ յար և նման կազմակերպութիւն մ'ունի հինին, այլ առաջինին մէջ հետքերը միայն կը տեսնուին հնաւանդ ուրբատուի մը: Արդի համայնքի կազմակերպութիւնը փնտռել նախնեաց մէջ՝ պատմաբանօրէն անկարելի է, և արդի գեղացին համեմատել հինին հետ, բնաշրջման օրէնքին հակառակ կը նկատենք: Այնչափ միամիտ չենք կարծելու թէ հայ գեղացին կամ համայնքը ու է կերպով քաղաքակրթութեան ազդեցութիւնը կրած չըլլայ, իր բովանդակ զգացումներով ու գաղափարներով ապրած ըլլայ իր պատկերէն ժառանգած մտաւորական ու ֆիզիքական կեանքին մէջ, Դարեր երկնած ու դարբնած են համայնքի կազմա-

կերպութիւնը, ընտանեկան արեւակցութեան ու ցեղական արեւակցութեանէ ետքը:

Նախնեաց պատմագիրներու սովորական եղանակն էր դէպքերն ու դէմքերը խտացնել, համադրել, մինչ նորը կը վերլուծէ, իր տարերքներուն կը վերածէ: Արդ՝ այս վաղընջական դարերու պատմագրութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ նշանաւոր անձերու կենսագրութիւն ուր մարմնացած էին ժամանակակից դարերն ու ներկայացուած՝ ընկերութիւնները: Ժողովրդին կենսունակութիւնը, անհատականութիւնն ու գործերը խտացած էին միակ անձի մը մէջ: Հնախօսական արձանագրութիւններն ու յիշատակարանները պերճաբոս վկայ են մեր ըսածին: Հին ու Միջին դարերու մէջ չենք հանդիպած երբեք, իսկ նորին մէջ հազուադիւրս թէ՛ այս գեղացին կամ քաղքցին մարդասիրական հաստատութեան մը կառուցման սատարած ըլլայ: Միշտ Clan-ի մը աւագ անձնաւորութիւնն է որ կը ներկայանայ իբր մարմնացում հաւաքական աշխատութեան հը: Եթէ վերլուծենք՝ օրինակ Որիոնի ու Տիտանեան հսկայի քինախնդրութիւնը ու գուպարը, բաց ի նախնեաց պաշտելութեան նշխարներէն, պիտի տեսնենք որ Ուրարդացոց՝ Ասորեստանցոց դէմ մըսծ պատերազմներու խտացումն են՝ այդ Որիոնն ու Տիտանեան հսկան: Այս մասին հետաքրքիր ընթերցողը կրնայ զիմել ի մէջ այլոց, յաւէտ ուղբացեալ Յր. Լընորմանի «Les Origines de l'Histoire», 3 հատոր ու Բօլ Մուժօլի «Les Problèmes de l'Histoire»:

Ըստ երեւոյթին արեւու լոյսը պարզ կամ տարրական է. սակայն իրողութիւնն այնպէս չէ: Արեւու լոյսն երբ պրիմալի մը մէջէն անցնի, տարբեր գոյներ կը ցուցնէ. ամէնքը միտին «Արեւապատկեր» կը կոչուին: Այսպէս ալ, եթէ գիտական — պատմաբանական — ազգագրական պրիմալէ մը անցնենք դարերն ու պատմական անձերը, զանազան դէպքեր ու տարբեր դէմքեր, խտացած, ձուլուած «Եսեր» պիտի ցուանան, ու երեւան գան:

Ճաւալի է խոստովանիլ թէ բոլոր հին ազգերը պատմութիւն չունին, այնպէս՝ ինչպէս կ'ըմբռնեն Պըքլի, Տրէյբըրի ու Մոմփէ-

նի աշակերտները : Պատմութեան այս չգոյութիւնն արդիւնք է այդ դարերուն վարչական ու քաղաքական թերի կազմակերպութեան ու ընկերաբանական հայեացքին : Ծանօթ պատմագիրներ՝ Սուխոմն, Կինոսոս Կուրկիոս, Կուռնիկոս Նեպոս, Հերովդիանոս պարզապէս կենտադիրներ են : Քսենոփոն, Սալուստոս, Տակիտոս, Թուկիդիդէս ու Պլինիոս բոլոր գէւեթերը կեդրոնացնել ձգտած են : Թողունք մեր գաճաճները, որոնք՝ բաց ի փառստոս Բիւզանդէն, մեծ մասամբ գիտական արժէք մը չունին : Հիներուն մէջ բացառութիւն կը կազմէ ՊԼՈՒՏԱՐԻՔՈՍ որ իր «Ջուգաղիփ»ի մէջ (թրգմ. Հ. Եղիա Վ. Թումաճան, 6 հատոր, Վենետիկ, 1832) համեմատելով Յայն աշխարհակալ մը կամ օրէնսդիր մը, Հռոմայեցի համապատիւ անձնաւորութեան մը հետ՝ Պատմական վերլուծման = Պատմութեան իմաստասիրութեան, բուն պատմութեան խարխիւրը կը ձգէ և յունահռոմէական ընկերութիւնը կը պատկերացընէ : Պրատորքոսի գուգաղչեաժ մէն մի անձնաւորութիւն խտացումն է, պատկերն իր ժամանակակից ընկերութեան ու դարուն :

Կեդրակայնենք. Ընտանիքի մը, տոհմի մը իւրաքանչիւր անդամներու անհատականութիւնը՝ «եսը» կեդրոնացած, խտացած էր իր ջոշին մէջ, ոչ թէ Անհատականութիւնը ընտանեկան արեւակցութեան ու ցեղային արեւակցութեան վրայ հիմնուած : Ասի կը հատատուի նաև Պր. յօդուածագրին մէջ բերած սա ազգագրական — ընկերաբանական երեւոյթւն. «Միւսնոյն նախահօր պատկանող քսան ընտանիք կը կազմեն, օրինակ «Պետոյի» տունը» : Եթէ այս պարագան վերլուծէր Գ. Անդրէասեան էֆ., չէինք կարծել որ ազգագրական, պատմաբանական սխալ եզրակացութեան մը յանգէր :

Դ. ԽԱՉԿՈՆՑ

ԱՐԹԱՆԱԿ

Հետեւեալ պատասխանները ընդունած ենք, «Հանրագիտակ»ի 65րդ թւոյն մէջ՝ Ս. Յ. Գրգըլեան էֆ. ի՝ յուզած կրթական խնդրոյն նկատմամբ, զորս կը հրատարակենք՝ սպասելով միանգամայն ուրիշ անձնաւորութեանց պատասխաններուն ալ :

1.—Մերթ ընդ մերթ կը յուզուի սա խնդիրը թէ՛ սր ազգի դրականութեան հետեւելու ենք. և կարծեմ կը վճռուի միշտ ի նպատակ տնկօ-սաքսոնեանին : Անգլիական կամ գերմանական գիտական դրութիւն մը պիտի դարձնէ մեր կրթութեան ղեկը, և փոխանակ այժմու «անգոյն, անկերպարան և առանց նկարագրի երկտասարդութեան»՝ պիտի տեսնենք՝ «տոկուն և առոյգ կազմուածքով բազմաթիւ արհեստագէտներ, մեքենագէտներ, ճարտարագէտներ» :

Այսօր՝ առաւել քան երբեք, գործնական դատարարականութեան պէտքը կը զգացուի, և առաջ կ'երթուի Յարգելի Բոլատին պէս շատ մը «արհեստանոց-վարժարաններ» հաստատել բաղձալու չափ : Հնդկաստանի համառաւոր Հայ վաճառականներու եղբայրները չե՞նք. Պառոն տը Թիէլմանի նման դժուարահաճ ճամբորդներ իսկ կոչած են մեզ «Արեւելքի վաճառականները», «Կովկասեան առևտուրի պետերը» : Խառնուածքով յարմար ենք «արուեստի, երկրագործութեան ու վաճառականութեան», և Կլոդիլտի թողներուն նման կրնանք լինել դրական, խորհող, պաղարիւն, անվճատ, համբերատար, ձեռներէց, կշռող և հաշուող : Անշուշտ հասկցաք միտքս, սիրելի Գրգըլեան. «անգլիական ուղղութիւնը», իբրեւ լուազոյնը, օգտակար պիտի ըլլար մեր ազգին, առանց փնասելու տոհմային դատարարականութեան : Տեղական պայմաններն ալ ասոր հակառակ չեն :

2.—«Այս կրթական ծրագրին գործադրութիւնը յաջողցնող դիւրին ու դրական միջոցը՝ նախ ուսուցիչ պատրաստելն է» : Տեսէք սրամիտ Անդրէասեանի պատասխանը

«Անցորդ»-ին՝ թ. 4056 «Արեւելք»-ին մէջ: «Կատարելագործուած ծրագրէն առաջ, մեր միտքը պէտք է գրաւեցնէ ուսուցչին անձը. սա լինելու է կազմուած, աւարտած անհատականութիւն մը...»:

Ուրեմն հաստատենք վարժապետանոցը:

ՊԼՈՒԶ

«Ո՞ր ազգին կրթական ուղղութիւնը օգտակար է ու յարմար՝ մեր ազգին»: Կը հարցընէ՝ «Հանրագիտակ»-ի յարգոյ աշխատակից Ս. Յ. Գրգըլեան էֆ.:

Զուգադիպութիւն մ'է որ, գրեթէ սոյն օրինակ հարցախնդիր մ'ալ մենք հրապարակ նետել մտադրած էինք, «Հանրագիտակ»-ի օգտաշատ էջերուն մէջ, երբ արդէն, Գրգըլեան էֆ. կանխելով զմեզ, առաջնութիւնը կ'ունենայ յայտնի Փափաքելով հանդերձ՝ Գրգըլեան էֆ.-ի կարճ ու կոկիկ հարցման հակիրճ կերպով պատասխանել, նկատել կուտանք միանգամայն թէ այսպիսի տուճմային կենսական խնդիր մը, ո՛չ թէ մէկ սիւնակի, այլ քանի մը թերթերու, և նոյն իսկ հատորներու մէջ անգամ լուծել կարելի չէ: Ուստի՝ մենք այս մասին սոսկ կարծիք մը յայտնելէ աւելի ոչինչ պիտի կրնանք ընել:

Նախ՝ փութանք ըսելու թէ, որքան որ Գրգըլեան էֆ., ցեղական ընդունակութիւնները, խառնուածքը ևլն. կուզէ նկատողութեան տունել, մեր կարծեաց համեմատ, երկրորդական առարկութիւններ են անոնք, քանի որ՝ համոզուած ենք թէ, կրթութիւնը գլխաւոր դերակատարն է մարդու մէջ՝ յամենայնի. և կրնայ իր ազդեցութիւնը զգալի ընել՝ նոյն իսկ ցեղային յատկութեանց, խառնուածքի, միջավայրի ևլն. վրայ:

Այս կէտը այսպէս պարզեցնէս վերջը, կը պատասխանենք ուղղակի իր հարցման՝ և կ'ըսենք թէ, մեզ՝ Հայոցս համար յարմարագոյն կրթական ուղղութիւնը պէտք է ըլլայ անպաճոյճ և դրական: Ընտրեալ, կոկիկ կրթական ուղղութիւն մը, որ գրասեղանին վրայ՝ տղուն մտքին մէջ հաստատէ՝ երկրա-

գործութեան, արհեստի և վաճառականութեան կարեւորութիւնը, իբրեւ դրամ չահելու, ապրելու՝ ընտիր ու պատուաւոր միջոցներ: Չէ՞ մի որ մեր միջավայրն ալ այս կը պահանջէ արդէն մեզմէ, և թէ մենք Հայրս ալ՝ մեծ մասամբ, մեր ցեղային յատկութիւններով աւելի այդպիսի ուղղութեան մը յարմարութիւն ունինք, մանաւանդ արեւելքի մէջ: Մնաց որ, այս ճշմարտապէս մեր ազգին օգտակար ուղղութիւնը, ո՞ր ազգէն օրինակելու ենք:

Ահա՛ դժուար հարցում մը, որուն ստուգիւ չկայ ո և է որոշ պատասխան: Նախ որ, ամէն զարգացած ազգ, ինչքան ալ մեզմէ նախադաս, կրթական ընտիր և լաւ ծրագրերն և ուղղութիւն ունեցողներ ըլլան, ունին նաև, իրենց ուղղութեանց հետ միախառն ու չաղախեալ՝ յուր և կործանարար դրութիւններ, թէ՛ կրթական և թէ՛ ընկերական տեսանկիւով, որոց հանդէպ չէ կարելի որ ժուժէ ու տոկայ մարդ, մարդ՝ որ ճշմարիտ ու կատարեալ գիտակցութիւնն ունի իւր հոգւոյն ու իւր կրօնքին: Սակայն կշիռ մը կայ հոս, զոր պէտք է ունենալ միշտ ի ձեռին, կշիռ ու բաղդատութեան դնել, և «ընտրանք» առնել միշտ լաւագոյնն և օգտակարն, ամէն անգամ այն ամէն ուղղութիւններէն՝ որոցմով եւրոպական ազգեր կը կառավարեն իրենց կրթարաններ: Օրինակի համար, հետեւիլ միւսին կրօնասիրական ուղղութեան միայն, միայն՝ տուճմասիրականին, այլոց՝ գիտականին ևլն., և իւրաքանչիւր ազգէ ընտրանք առնուած ուղղութիւններէ՝ ամբողջութիւն մը կազմելով՝ կազմակերպել կրթական արժանավայել ծրագիր մը, որու ծափահարէ եռանդազին ամէն զգայուն գաղաղ ու զխող, սիրտ ու հոգի:

Մէկ խօսքով, ըստ մեզ, չէ՛ կարելի ցոյց տալ այնպիսի ազգի մը ուղղութիւնը, որ իւր ամբողջութեամբ կարենայ համապատասխան հանգամանք մը ունենալ մեր պահանջումներուն. իսկ նախապէս մեր առաջարկած դրական ուղղութեան մասին, ամփոփ ու հակիրճ պատասխաններով տրամաբանական ուսումնասիրութիւն մը եթէ երբէք կը պահանջուի՝ կարծենք «Հանրագիտակ»-ի Պատ.

Խմբագիր Տիար Բոլատ, իւր կորովայնի մասօք ու հասուն դատողութեամբ սկիզբէն ի վեր, ինչպէս 65րդ թւով, Կ. Էֆ. Սէմիւելեանի հարցման առթիւ ըրած խորհրդածութիւններն են, որոնք՝ աւելի որոշակի և ամփոփ կերպով գծուած ըլլալով, մեզ կը մնայ միայն ի սրտէ ծափահարել, և մեր կողմէն կրկնել թէ՛ փոխանակ մեր մանկանց ուղեղը վերացական ուսումներով պարարելու, պարարենք նախ անոնց հոգին, բարոյական կատարեալ դաստիարակութեամբ, որպէս զի ամէն պարագայի մէջ միշտ նեցուկն ու զօրավիգ ըլլայ իրենց. զի առանց բարոյականի չիք կատարեալ դաստիարակութիւն: Ուղեքնք անոնց ուղեղները արհեստագիտական կրթութեամբ, և ուժաւորենք իրենց ձեռքերը այն ամէն գործնական և հիմնական ճարտարարուեստներով, որոնք հայթայթիչներ են կենսական պարէնին՝ հացին՝ հանապազօրին՝ ու շահուն: Եւ ապա՝ եթէ կայ ու կը մնայ միջոց, այն ատեն միայն տեղ տանք ուրիշ վերացական ուսմանց. զի հիմա, հացի՛ պէտք ունինք մենք ալ՝ ամէն ազգի պէս, և անոնցմէ աւելի, տնտեսական այս տագնապալի դարուս մէջ, ուր հազը մէկվմէկու բերնէն կը խլուի: Ուստի՝ կրթական վարչչներուն կը թողունք մտածել թէ՛ որոնք են այն ծրագիրները, զորս կարելի ըլլայ յարմարցնել մեր դպրոցներուն:

Մանկոտ

ԳԵՂԱՄ Կ. ՌԻՆՃԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԵՐԵՔ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վայրկենական ազգեցութեան տակ գրչի ճարտուութէ, կոյսին, լոյսին, ծաղկին ձօնուած անճաշակ, — գեղագիտութենէ զուրկ — գրուած քներէ համ չառնող ու մանրակր-

կիտ, լւարջ ուսումնասիրութեանց ակնդէտ անձեր պիտի ողջունեն մանուկ Հայագիտութեան բարգաւաճման ստատուոյ, լեզուաբանական ուսումնասիրութեանց նուիրուած երկու պրակներ որ ըլլա տեսան այս օրերս: Մէկն է Les Explosives de l'ancien Armenien étudiées dans les dialectes modernes, և միւսը՝ Notes sur quelques faits de Morphologie. Առաջինը զոր կատարած են Պր. Հր. Աճառեան, լ'Ապպէ Բուսը ու Ա. Մէյյէ, զուտ Ռինգախօսական = Rhinologie, Ունկաբանական = Otagie, Խոչախօսական = Laryngologie ու փորձառական Ձայնախօսական է: Այս գիտութեանց շնորհիւ, լ'Ապպէ Ռուսլոյ աշխատանոցին մէջ, Պր. Հր. Աճառեան ուսումնասիրած է Կ. Պարոյ, Ասլանբեգի, Նուսիի, Շուշիի, Կարմէնի (Մուշ) ու Սվասի գաւառաբարբառներու Բ, Պ, Փ, Գ, Կ, Ք, Դ, Տ, Թ, Ձ, Ծ, Ճ, Զ պայթուցիկ, լծորդ ձայներու հնչականութեան եղանակաւորումները: Լ'Ապպէ Ռուսլո հետազօտած է ընաչրման պատճառները, ու Ա. Մէյյէ ալ անոնց հնչման վրայ պատմական ծանօթութիւն մ'ուեցուցած է:

Ներկայ ուսումնասիրութեամբ փակուած կրնայ համարուիլ հնչման լեզուապայքարը զոր տգիտաբար, առանց լեզուաբանութեան վրայ դոյզն ծանօթութիւն մ'ունենալու, մեղցին տարիներ առաջ մեր ու արեւելեան Հայոց քանի մը պատուելիները: Լեզուաբանօրէն անկարելի է որ մենք այդ ձայները Ռուսահայոց պէս հնչենք, և փոխադարձաբար: Պատճառներն արտայայտիչ պատկերներով պիտի տեսնենք գործին մէջ: Ամէն մասամբ յանձնարարելի ուսումնասիրութիւն մըն է: Քիչ չատ վարգացած ու այդ լեզուապայքարին հետաքրքրուող անձեր կ'արժէ որ կարդան այս պրակը:

Երկրորդը ծանօթ Պրոֆ. Ա. Մէյյէի մէկ ուրիշ նոր ուսումնասիրութիւնն է, 16 էջէ բաղկացած: Յարգելի Պրոֆ. ը 1) Հնգերու պական լեզուներու, գերադրական աստիճանի ձայները. 2) Սանսկրիտի հայցականները որ հայերէնի հետ համեմատական եզրեր ունին՝ քննելէ ետք, խնամքով ուսումնասիրած է հին Հայերէնի բայերու միավանկ կատարեալ Նգ. Գ. դէմքի կազ-

մութիւնը, ինչպէս «արրի»՝ «արր», «էարր»
և այլն: Պրոֆ. Լ. մասնաւոր քննութեան են-
թարկած է դերանուններու սեռականի և
հոլովակերտը, ինչպէս «նա»՝ «նաՐա», «նա-
Րին», «այն»՝ «այն—Ր» և այլն: Այս և կը
համապատասխանէ հելլենական բա հոլովա-
կերտին: Հայագէտը գործին Ը. գլխին մէջ
Արդի Հայերէնի քանի մը անուններու սե-
ռականին «ոջ» հոլովակերտն ալ հետազոտած
է, ինչպէս տագր՝ տագր—ոջ և այլն: Ասոր
համեմատական եզր կը ներկայացնէ Սանս-
կրիտերէնի սՏը որ նմանապէս սեռականի
հոլովակերտն է: Այս հատուածը մասնաւոր
անով շահեկան է որ «այր»-ի ծագումը ու
իր ծանօթ կերպով հոլովելու պատճառն ալ
պարզած է:

Պրոֆ. Մէյլէի սոյն ուսումնասիրութիւնը
Հայերէն քերականութեան գաղտնիքներուն,
օրէնքներուն—լեզուի Հոգեբանութեան ու-
սումնասիրութեան պարապօղներուն աչքէն
վրիպելու չէ: Ի դէպ է դարձեալ ըսել թէ
առանց լեզուի հոգեբանութեան անհնար է
Հայերէն քերականութեան օրէնքներուն թա-
փանցելու և վերջնական քերականութիւն մը
պատրաստելու: «Զարգացելոցը» և ուրիշ աղ-
բիւրներ բաւական չեն հմուտութիւն համա-
րելու Հայերէն լեզուի մասին:

Պրոֆ. Մէյլէի ուսումնասիրութիւնները,
Հիւրըմանի հետ դարաշրջան մը կ'սկսին Հա-
յերէն Քերականութեան գիտնականօրէն հե-
տազօտելուն:

Լեզուաբանական երրորդ ուսումնասիրու-
թիւնն է Պր. Հր. Աճառեանի «Etude sur la
langue laze», էջ 110: Մեր Հայ երիտասարդ
լեզուաբանին ուսումնասիրութիւնը իր կար-
գին մէջ առաջինն է: Լեզուաբաններուն ցարդ
ծանօթ էին Կապրովի Asia polyglotta, Pa-
ris, 1823. Ռուկէնի Ueber die Sprache der
Lazen, Abhandlungen, der Berliner Akade-
mia der Wissenschaften, Berlin, 1843, և ու-
րիշ մըն ալ Փոն Էրքէրթի Die Sprachen des
Kaukasischen Stammes, Վիեննա, 1895:

Հրաչինն երեք մաս կը պարունակէ «Հա-
յերէն բառացուցակ», «Հայերէն գաւառա-
բարբառներու համեմատական քերականու-
թիւն», «Քանի մը լազերէն գրուածքներ»
Փրանսերէն թարգմանութեամբ:

Հայերէնը յատուկ «այր ու լէն» չունի.
Պր. Աճառեան լազերէն ձայները 32ի վերա-
ծած է: Լազերէնի շեշտը գրեթէ բաւի մը
վերջընթեր վանկին վրայ է: Հնչումնին թաւ,
թանձր, թէև չլիթունքնին քիչ բացած կ'ար-
տասանեն:

Հայերէնէ քանի մը փոխառեալ բառեր
ալ տեսանք Լազերէնի մէջ, ինչպէս Bucxi=
փոցիս (էջ 9), Cud=
«Սուտ» (էջ 11), գոր չե
նշանակած իբրեւ Հայերէնէ փոխ առնուած,
Դիմացը նշանակուած mentir, tromper բա-
ռերը՝ մեր բոսածը կը հաստատեն: Tavari=
«Տաւար», «տաւար» (էջ 16), Guinzuxi=
«ցնցուկ» (էջ 23), Jar=
«ճառ»-ի կրնայ հա-
մեմատուիլ: Kacaxi=
«Քացախ» (էջ 30),
Xojguri=
«խնձար», որ արդէն ասորերէնէ
փոխ առնուած բառ մըն է:

Լազերէն քերականութիւնը բաւական հա-
մեմատական եզրեր ունի մերինին հետ, ինչ-
պէս էջ 70, համար 25—29, էջ 71, համար
30, 35, էջ 72, համար 42 և այլն:

Պր. Աճառեանի այս ուսումնասիրութիւ-
նը պատուաբեր է թէ՛ մեր ազգին և թէ՛
նոյն ինքն հեղինակին որ ծանօթ ըլլալով
մեր ընթերցողներուն, աւելորդ կը համարինք
պայմանադրական ներբողներ հիւսել իրեն
մասին:

Հրաչեան լեզուաբան ծնած է: Արեւ-
մուտքի մէջ իբր հեղինակաւոր անձ, հմուտ
լեզուաբան ճանչցուած է դեռ երէկի այդ
Սամաթիացի տղան: Աճառեանի ուսումնա-
սիրութիւնը կարգաւոր ատեն՝ միշտ կը յի-
շեմ հանգուցեալ Պրոֆ. Ք. Պատկանեանի
յաճախ կրկնած, առածի կարգ անցած սա-
խօսքերը. «Իմ գրածներս կրնան չհաւնուիլ,
բայց զիս մեղադրել թէ ես գրածիս զրա-
կանութեան ծանօթ չեմ, ոչ մէկը կրնայ
Ո՛ր և է բանի ձեռնարկելու ատեն, կը ծա-
նօթանամ բոլոր գրականութեան որ սոյն
նիւթիս վրայ կրնայ գտնուիլ» Այսպիսի աշ-
խատող մեր մէջ դժբախտաբար հազիւ մէկ
երկու հոգի կը հաշուին: Հրաչի ուսումնա-
սիրութիւնները յորդոր մըն են մեզի, նոյն
կերպով մանրամասնօրէն ծանօթանալ գրա-
կանութեան հետ՝ ու է նիւթ գրելու ատեն:
Ի դէպ է աւելցնել թէ «Հանրագիտակ»

յառաջիկայ թիւերով պիտի սկսինք հրատա-
րակել մեր պատասխանը, ընդգիտախօսու-
թիւնը Պրոֆ. Յակոբեան էֆ.ի «Բիւզան-
դիոն»ի վերջին թիւերուն մէջ գրածին:

Դ. ԽԱՉԿՈՆՑ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ

ՄՈՒՐ, ՄՈՒՆԻՐ ԵՒ ՈՍԿՈՐ

Իբրեւ պարարտեցուցիչ նիւթեր
մշակելի հողերու համար

(Շար. թիւ 69 էն)

Հանքային աղերը որոնք գլխաւորներն են՝
կիրի լուսածնաւորը և բնած խաւորը, և ատոնք
ինչպէս որ կենդանիին կամ խորը կը կազմեն,
այնպէս ալ բոյսին հիմնական մասը: Եւ ու-
րովհետեւ՝ ընդհանրապէս հողագործը իր
հողէն արտադրած հունտերը՝ ցորեն, գարի
ևլն. կը ծախէ. ինչպէս իր հողին վրայ ծը-
նած, սնած ոչխարը, կովը կամ ձին, ըսել
է՝ իր հողին մէջ գտնուած հանքային նիւ-
թերը անվերադառնալի կերպով այլուր ար-
տածած կ'ըլլայ, որով՝ և իր հողն ալ օր ըստ
օրէ կը տկարանայ: Չէ՞ք լսած շատ մը հո-
ղագործներու բերնէն, թէ զոր օրինակ.
«մի, մեր սա վերի կամ վարի արտը, Պա-
պոն նոր բացած ատեն ո՛րչափ բերրի էր, կը
հաւատա՞ք, մէկին մինչեւ 15 էլն. կու տար,
մինչդեռ հիմա՝ հազիւ թէ մէկին 4 կամ 5»:

Հողեր կան որոնք բնականէն կը պարու-
նակեն այնչափ հանքային աղեր, որ դարեր
մշակուելով հանդերձ իրենց արտադրիչ ուժը
չեն կորսնցներ, բայց առ հասարակ՝ պէտք
է հողերուն վերադարձնել այդ իրենցովէ
վերցուած հանքային աղերը, զորս ուրիշ և
ոչ մէկ կերպով կրնայ վերատանալ: Հողա-

գործը՝ նամանաւանդ Թուրքիացի հողագոր-
ծը իր տրամադրութեան տակ շատ առատո-
րէն ունի այդ նիւթերը, և սակայն չը գիտ-
նալով, իբրեւ անպէտ նիւթեր զանոնք կը
նետէ, կ'ոչնչացնէ, հոս մասնաւորապէս պի-
տի խօսիմ այսօր՝ միայն մուրի, մոխրի և
սոկորի վրայ: Մեր ներկայացուցած ցուցա-
կէն յայտնի կը տեսնուի թէ անկենդանա-
յին նիւթերը՝ և հանքային աղերը առատու-
թեամբ կը գտնուին մուրին մէջ, և թէ՛ ա-
ռաջիկները կը կազմեն գրեթէ անոր ծան-
րութեան կէսը: Ասկէ կրնանք հասկնալ թէ
մուրը ամենագորաւոր պարար մ'է հողին՝
հետեւաբար և իր վրայ յառաջ եկած բոյսե-
րուն համար: Ուստի՝ ամէն ատեն մաքրե-
ցէք ձեր փոխերիները, և հաւաքուած մու-
րը խնամով պահեցէք. եթէ կրնաք, քաղաք-
ներու ծխնեղոյզ և վառարանի խողովակներ
մաքրողներէն ալ դրամով ծախու առէք.
չէ՞ք խաբուիր: Ասի մը մուրը 20 ափ տովո-
րական աղբէն աւելի աղղեցիկ և զօրաւոր
է. աղբը փոխելու՝ հետեւաբար և բոյսին
մարսելի ըլլալու համար, ժամանակի կը կա-
րօտի, մինչդեռ մուրը արդէն պատրաստ
չաքար մ'է, զոր Զուրին մէջ ձգելուդ պէս
կը հալի:

Եւրոպայի մէջ հողագործները դրամով
ծախու կ'առնեն մուրը, և տեղւոյն համե-
մատ, Ձէն 3 ֆր. կը վճարեն մէկ էքզօլիդ-
րին, որ հաւատար է: պոլսական 2 ու կէս
ֆլիէի, կամ 10 նոր շինիկի:

Ինչպէս ըսինք, մուրը ամէն տեսակ մշա-
կութեան համար ալ զօրաւոր պարար մ'է.
կրնաք գործածել զայն՝ մարգագետինները,
հացաբոյսերը, բանջարեղէնները ևլն. զօ-
րացնելու: Աշնանային ցանքերուն վրայ (ցո-
րին, գարի ևլն.) իբրեւ ծածկոց կը տարա-
ծեն մուրը՝ գարնան սկիզբները. գարնան
ցանքերուն համար ալ, ցանքի տտեն՝ հուն-
տին հետ խառնելով կը ցաննեն: Այսպիսի
պարագաներու մէջ, կը գործածեն մօտա-
ւորապէս մէն մի արտավարի (տէօնիմ) հա-
մար, պոլսական 4էն 5 ֆլիէի չափ մուր: Եր-
բեմն այս քանակութիւնը կը բարձրացնեն
մինչև 10 ֆլիէ:

Խոտաշունչ ձմեռներէ վերջ, գարնան

սկիզբները երբ տեսնէք որ ձեր ցորենը կամ ուրիշ ու է մի ցանքը դեղնած և վտիտ է, առանց սպասելու և տարակուսելու, մուր տարածեցէք անոր վրայ անմիջապէս, և պիտի տեսնաք որ մէկ երկու օր վերջը՝ ձեր ցանքը՝ դեղնայիկ մոյգ կանաչ գոյն մ'առած է, և զօրացած է: Եթէ այս տարի, ձեր վարունգներու բոլորտիքը (արմատին մօտ անշուշտ թաղելով) մէյ մէկ քիչ մուր ցանած ըլլայիք, այդ լուծներու փնար մասամբ, և թերեւ ալ մեծ մասամբ նուազեցուցած կ'ըլլայիք: Այսպէս և, երբ ձեր բանջարեղէններէն ու մանք տկար ըլլան, կրնաք դարման տանիլ անոնց, մէյ մէկ քիչ մուր տալով:

Մուրը՝ չստ մը միջատներու համար իբրեւ միջատասպան դեղ կը նկատուի, և ունի հակառակիչ յատկութիւն մը: Եթէ հունտերը անով խառն ցանուին, մեծ մասամբ նորաբոյս բոզբոջները անոնց փնտներէն զերծ կը մնան: Շատ մը հողագործներ ամէն տարի՝ գարնան սկիզբները իրենց ծառերու, թուփերու ելն. բունին բոլորտիքը քիչ մը փորելով, մուր կը տարածեն ու կը թաղեն, որով անոնք թէ միջատներու ասպատակութենէն զերծ կը մնան, և թէ միւսայն առտեն ալ աղբուած կ'ըլլան: Բայց իր այս ամէն յատկութիւններուն քով, մուրը պակասութիւն մ'ունի, որ անոր արժէքը և կարեւորութիւնը կորսնցնելու տայ: Ինչպէս իր բաղադրութեան ցուցակէն կը տեսնուի, մուրը մեծ քանակութեամբ կնձնական թըթուտ կը պարունակէ, որ արգելք կ'ըլլայ անոր՝ բոյսին վրայ անմիջապէս ներգործելու, և երբեմն ալ այդ թթուութեան պատճառաւ փնտասկար իսկ կ'ըլլայ: Ուստի՝ պէտք է մուրին թթուութիւնը առնել՝ անոր հետ մոխիր խառնելով, և այնպէս ցանել: Մոխիրը՝ մուրին մէջ գտնուած կնձնական թթուտին հետ միանալով, անոր թթուութիւնը կը չեզոքացնէ. երկրորդ՝ անկենդանային շիւթերուն վրայ ներգործելով, զանոնք դուրահալ վիճակի մը կը վերածէ, և ազդեցութիւնն իրաւելցնէ:

Բայց ամէն պարագայի մէջ, եթէ մուրը ցանուելէ վերջ անձրեւ չի գայ, և կամ եթէ չի կրնաք ոռոգել, ոչ միայն ապարդիւն կը

մնայ, այլ մինչև իսկ փնտասկար կ'ըլլայ, և եթէ բոյսերը դեռաւոր ըլլան: Ուստի՝ խոհեմութեամբ չարժած ըլլալու համար, եթէ մինչև 2 օր չանձրեւէ, պէտք է հետեւեալ օրը ջրել: Շատ տեղեր փոխանակ մուրը առանձին գործածելու, կը խառնեն զայն աղբակոյտին մէջ:

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ

ԴՈՐՄՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. թիւ 69 էն)

—o—

Առտու մը մինչ մեղուններու քով կեցած կը դիտէինք անոնց աշխատութիւններն ու կը զուարճանայինք, տեսնաք որ փեթակի մը մէջէն 2-3 մեղուններ դուրս կ'ելլեն, բայց չեն կրնար առաջ երթալ, իրենց թեւերը կը գալարին, յետոյ վազելով՝ քիչ մը թռան օդին մէջ ու ինկան անմիջապէս: Այսպէս քանի մը ուրիշ մեղուններ ալ գետին ինկան: Այդ փեթակին ետեւի կախարչը վերցնելով՝ սոպակին ետեւէն դիտեցինք որ ներսը փեթակին յատակին վրայ տասը քսանի չափ մեղուններ միւսայն կերպով կը չարչրկին ու 20—30 հատ ալ անշարժ գետին ինկած են: Այդ ողջ մեղուններէն մէկ քանի հատը առինք անմիջապէս, հասկնալով թէ գիտութիւնն ենթարկուած են: Ընդհուպ փեթակին մէջ գտնուած աղտեղութիւնները մաքրեցինք ու մեղրալիք ջերջերը քաղեցինք, խորհելով թէ փնտասկար ծաղիկներէ առնուած մեղր կրնայ գտնուիլ անոնց մէջ: Մեղուններուն կերակուրի համար մեղրի տեղ չաքարը ջուրով եփեցինք և պաղելէ վերջ, փեթակին մէջ դրինք: Իսկ մեր ձեռքը գտնուած մեղունները ապակիէ ամանի մը տակ դրինք, նաև ձիթաւղէ և ակամամով չաղուած խիւս մը դրինք անոնց քով:

Առաջին անգամ մեղուները անշարժ մնալին, բայց յետոյ սկսան կենդանութեան նշաններ ցոյց տալ: Երբ այլ ևս ապահով եղանք թէ մեղուները առողջ են՝ փեթակին առջեւի ծակերէն ներս ղրկեցինք. սակայն փեթակին պահապան մեղուները քաշելով քաջջելով դուրս հանեցին դարձեալ: Հետեւեալ առաւօտ՝ դարձեալ մէկ երկու մեղուներ նոյն չարչարանքները կը կրէին փեթակին մէջ: Ուստի առջի օրուան կատարած մեր փորձին վրայ յենելով՝ ականամովի և ձիթաւի խառնուրդը քսեցինք փեթակին ներսը: Այլ ևս նոյն հիւանդութիւնը չտեսանք: Պէտք է ըսենք սակայն որ մէկ քանի օր վերջ այդ քսածները մաքրեցինք մեղուներուն թշնամի ցեցերուն կերակուր չմատակարարելու համար:

Այս փորձ չենք կրնար ըսել որ կատարեալ բան մըն էր, բայց անօգտակար ալ չէր կարծեմք. այս մասին լուսաբանութիւն մը կարելի է արդեօք:

Մեղուներու թշնամիները շատ են, որովհետեւ իրենց արտադրած մեղրը ամէն անասուններու ախորժելի է բնականաբար: Գլխաւոր թշնամիներն են մարդը, միջատները, ցեցերը, սփինքսը (Sphinx-atropos), շերտիակոթը, սարդը, մեղրածը, կանաչ իայտփորը, արջը, մկնաքիսը, մուկը, մողէզը, ծիծեռնակը, սոխակը և այլն և այլն: Թըշնամիներուն վրայ ալ զատ զատ չալիսի խօսինք, այլ միայն «ցեց»ին վրայ մեր ըրած դիտողութիւնները պիտի պարզենք:

Ցեցը գրեթէ ամէնէն սոսկալի և աւերիչ թշնամին է մեղուներուն: Եթէ փեթակի մը մէջ մտնէ ու արգելքի մը չհանդիպի, քիչ ժամանակուան մէջ աւերակ կը դարձնէ փեթակը: Այս կենդանին թրթուր մը կամ որդ մըն է. յառաջ կ'ուզայ տեսակ մը բարանակէ, որ գիշերները լամբարներու լոյսին շուրջը կը դառնայ: Այս որդը կը կրծէ, կ'ուտէ նոյն իսկ ջերջերը, մեղրը, բնաւ արգելք մը չընդունելով մեղուներէն. մինչև որ խողակ կապէ և դարձեալ թրթեռ դառնայ: Սոյն բարանակը փեթակին մէջ շփոցնելու համար ո՛ր և է միջոց մը գտնուած չէ դեռ. այլ միայն անկա ջնջելու, սպաննելու աշ-

խատութեան կանոններ ու միջոցներ ցոյց տրուած է: Հայր Բաջունի այս թրթեռնիկներուն թրթուրներէն ազատելու համար մեզի ուրիշ բան չըսեր՝ բայց միայն ջնջել ձեռքով կամ երկու փեթակները միացնելով ընտանիքը բազմաթուղով ընել: Կ'ըսէ նաև թէ եթէ գիշեր ատեն փեթակներուն առջեւ կանթել մը վառենք, որ լեցուած ըլլայ ձէթով կամ իւղով, թրթեռնիկները կանթեղին լոյսին կու գան ու թեւերնին այրելով իւղին մէջ կ'իյնան: Մենք ըրինք թէ և բայց տեսանք որ մեղուներ ալ լոյսին կ'երթան ու այրելով կը մեռնին:

Լսեցինք անգամ մը թէ տեղացի մեղուաբոյծ պառաւ կին մը շատ լաւ գիտէ եղեր այս թրթեռնիկները արգիլելու միջոցը, հետեւապէս դիմեցինք իրեն անուղղակի կերպով, բայց ըստ վաղեմի տեղային սովորութեան, իր գիւղին գաղտնիքը դուրս հանել չուզելով՝ չէր խնայուցած մեզի: Օր մը սակայն միջոցով մը խնայանք որ շատ պարզ բան մըն է եղեր...

Կը խոստովանինք թէ՝ մենք այդ պառաւին չափ չենք կրնար գաղտնիք պահել: Մեր անգաղտնապահութեան համար ալ ներողութիւն կը խնդրենք:

Այդ պարզ միջոցն է՝ կապոյտ կտաւը (տիմին) միացնելով մեղր քաղելէ վերջ ծխել անով: Մենք այս փորձը կատարեցինք տաւրին 3—4 անգամ և գրեթէ յաջողեցանք: Կ'երեւի թէ այս հոտէն խիստ կը գանին ցեցերուն թրթեռնիկները: Մեզ շահագրգռող բանը այս չէ սակայն, կը խորհինք թէ ներկին թէ կտաւին հոտն է որ այս ազդեցութիւնը կ'ընէ բարանակին վրայ, կամ թէ կտաւին և ներկին խառնուրդ հոտն է: Կը կարծենք թէ՝ եթէ ճշդուի կրնայ իր մեծ օգտակարութիւնն ունենալ (*): Երբ այս թշնամիին փեթակէն ներս մտնելու զօրաւոր արգելք մը գտնուի, մեղուաբոյծները մեծ շունչ մը պիտի առնեն բնականապէս:

Մեղուներու թշնամիներուն և հիւանդութիւններուն վրայ այսքան խօսելէ վերջ, անցնինք մեր հինգերորդ մասին, այսինքն՝ մեղուներուն վրայ կատարուելիք աշխատութեան ու խնամքին:

Շ-ր.

Պարտիզակ

Գ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

(*) Աւելի հաւանականը՝ ներկին հոտին ազդեցութիւնն ըլլալն է, քանի որ տնկա չինուած է լեղակէ և ծծկական թթուութէ: Փորձով կրնայ հաստատուել, անգայն կտաւը առանձին ծխելով:

Մ. Խ.

ՊԱՏԱՍԽԱՆ

ՎԱՐՁԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՆ

Պարոն, ձեր գրութիւնը սխալ հասցէի կ'ուղղէք. այն անձը որու կ'ականարկէք, բնա՛ւ մատ չունի քննադատական յօդուածին մէջ: Դուք Պարոն, սրբեցէ՛ք ձեր աչքերու ըրիժերը որ ընտելեան պարզեւած պայծառ ու անարատ լոյսին մէջ, լա՛ւ որոշէք բարին ու չարը, շիտակն ու սխալը: Դո՛ւք որ անբարոյութեան պաշտպան մը հանդիտանալ ձեզ համար փառք ու պատիւ կը սեպէք, չէ՛ք կրնար ձեր աղտոտ ձեռքերով՝ Կեսարի «մաքու՛ր» և «անքիժ» ճակատը աղարտել: Համագուեցէ՛ք որ անիկա լաւ գիտցած է ցայս վայր, իբրեւ պարկեշտ մարդ, իբրեւ հայ անհատ, իբրեւ իր պետութեան հաւատարիմ հպատակ, ապրի՛լ՝ սովորաբար ձեր գիտցածէն ու ճանչցածէն շատ աւելի բարձր և խփալ հեզիկ կեանքով մը, իր երկրային գտեալ դրախտին մէջ: Հոն՝ ձեր և ձեր նմաններուն արտաբերած գարշահոտութեանց տեղ, եղբմական վարդին ու շուշանին իսկաբոյրերով ահադձուն միջոցորտը կը ծծէ նա. պարկեշտութեան բլբլեղեայ գաւաթով՝ առաքինութեան նեկտարը ցմրուր կը քամէ նա արեւին պայծառ ու բարեբաստիկ լոյսին մէջ:

Դուք թերեւս բարի մէկն ըլլաք. բայց աւելի բարեմիտ կ'երեւիք ձեր գրչով, քան թէ բարի: Շատ սխալ հասկացեցած են ձեզ, թախարդի մէջ ինկած էք պարոն. ազատեցէ՛ք ինքզինքնիւ, և դարձէք Կեսարին. պատասխանեցէ՛ք ուղղակի իր հարցումներուն՝ առանց տկարանալու... Բայց շատ ուշ մնացիք արդէն. ձեր աննարկները նոյնութեամբ ձեզ կը վերադարձնէ Կեսար, ամենայն հանդարտութեամբ, ու քաղաքավարութեամբ: Հաճեցէ՛ք ընդունիլ զայնս՝ և փառաւորութիւն տնայնով, ձեր պաշտած ու պաշտպանած հեղինակի Ծննդական Գործարանքի շահատակութիւններուն մէջ... «Հայր, թող դոցա՛ զի ո՛չ գիտեն զի՛նչ գործ են»:

Իսկ գալով ձեզի, Պ. Խմբ. չե՛մ գիտեր ի՛նչ ըսել տղայի մը դէմ, որու բերանը տա-կաւին կաթ ու ապուր կը հոտի, և սակայն կը յանդգնի իր շուքէն անդին անցնելու անխոհեմութիւնը փորձել:

Դո՛ւք էք ա՛յն՝ որ ուրիշները թերուս կ'անուանէք, մինչդեռ շա՛տ ու շատ բան սովորելու պէտք ունիք: Սա չէ՞ ձեր գիտցած Հայերէնը:

«... Ասոնցմէ կ'երեւայ ամենէն «աւելի զգածուեր է մէկը որ ոչ միայն «թերուս չէ այլ և ունի բարոյական և «հոգեկան տխուր յատկութիւններ, ու «րոնք զինքը յաշս խղճամիտ և ազնիւ «զգացում կրող իւրաքանչիւր անհա-«տի, դուրս նետուելու արժէքը միայն «ունի»» (*)

Ապրի՛ս պարոն համալ սարանական Եւսակայն ցաւալին հոն է որ, ո՛չ թէ թերուսներ, այլ ոյդպիսի անուս ու անամիտ յաւակնոտներ թերթ վարելու կ'ելլեն, և ցաւալի է մանաւանդ որ հայական մամուլի հրապարակն այդ պիտիներու ձեռքը մնացած է:

Ի՛մ մասին, ես կը կարծիմ չիտակը՝ երբ կը կարդամ գեղարուեստագիտական (°) ու գիտական (°) փրցողուոյց մակդիրը կրող կիտամոսթերթի մը խմբագրապետին գրչէն ելած այդ աղքատ ու աղճատ գրութիւնը, որ ո՛չ Հայերէն է, ո՛չ Չինարէն. ո՛չ խմատ ունի, ո՛չ քերականութիւն, և ո՛չ ալ տրամաբանութիւն. և ա՛յն ալ՝ քննադատական կտորի մը մէջ: «Թող զկանայս և զմանկսիս»:

Ձեր ակնոցի թիւը կը հաճի՞ք փոխել, Պարոն. կ'երեւի՛ ձեր տարիքին յարմար ըլլալու չէ՛ անիկա. որու տակէն ամէն բան պլտոր կը տեսնէք...

Տեսէ՛ք թէ ո՛ր աստիճան աննկարագիր և անորոշ դաստիարակութեան մ'ունիք, Պարոն, որ գրադատի մը գրուածը քննադատելու տեղ, կը հասկնա՞ք, ուղղակի իր գըր-ուածքին պատասխան տալու տեղ, անոր անձին դէմ կը յարձակիք:

(*) Բնագրէն ընդօրինակած եմ, առանց բառ մը և կէտ մը փոխելու:

«Համբարգիտակ»ի գրաշար
ՕՆՆԻԿ ԱՐՁՈՒՄԱՆ

Ո՞վ տուտաւ այդ անանձ ազատութիւնը ձեզի, հրապարակաւ ըսելու թէ իմ միտքս ու հոգիս թանձր մութով մը պատած է, թէ ես՝ իմ օրերս կ'անցնեմ սեւհոգի արարքներու մէջ: Հաճեցէ՛ք հրապարակաւ բացատրութիւն չնորհել, Պարոն, եթէ չէք ուզեր անհաճոյ հետեւանքներու տեղի տալ:

ԿԵՍՍՐ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾԱԿԱՆ

ՄԱՆՐԱԳԻՏԱԿ

ԵՒ

ԻՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

(Շար. թիւ 67 էն)

Իւրաքանչիւր քննութենէ անմիջապէս վերջը, իրապանակիւ եւ իրափաղ իրարմէ զատելու համար, լրթամատին եւ ցուցամատին մէջտեղ կ'առնեն, եւ մէկմէկու վրայէ՝ ռահեցնելով կը բաժնեն. եթէ հորիզոնապէս վեր առնել յորձելով բաժնել ուզէք, անկասկած՝ անոնցմէ մին՝ եւ աւելի իրափաղ որ շատ բարակ է, կը ջախջախի:

Այս կերպով իրարմէ զատուած շերտերն ու շերտակները կը մաքրեն, ալքոյախառն ջուր պարունակող ապակեայ կամ յալոճապակեայ ամանի մը մէջ դնելով, ուրկէ՝ դուրս կը հանեն, ցուցամատի ծայրով, եւ բարակ ու մաքուր կտաւով մը կը չորցնեն:

Արդէն մանրադիտակ մը ծախու առնուած ատեն, հետը մէկտեղ որոշեալ քանակութեամբ իրապանակներ եւ իրափակներ կը գտնուին սուփին մէջ. բայց անոնք որ շուրտակալան քննութիւններ կը կատարեն, պէտք է բացէն մեծ քանակութեամբ գնեն, որպէս զի յանկարծ նեղը չի մնան:

ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Մանրադիտակի վրայ տրուած բոլոր այս մանրամասն ծանօթութիւններով, իր կիրարկութեան մասին մեր ըսելիքները բոլորովն պարզուած կ'ըլլան:

Ինչ որ ալ ըլլայ քննութեան ենթարկուելիք մարմինը, թիթեռնիկ, կծիժ կամ թըրթուր որու մէջ հիւանդութիւնը յատկորոշող տարրը պիտի փնտռուի, միշտ միեւնոյն դրութեամբ կը կատարուի գործողութիւնը:

Նախ՝ մանրադիտակը կրող գործասեղանը կը զետեղեն պատուհանին առջեւ, եթէ արեւու լոյսով պիտի աշխատուի. իսկ լամպարին առջեւ, եթէ գիշեր է: Ամէն պարագայի մէջ, եւ գործողութեան սկսելէ առաջ, լոյսը կը կանոնաւորեն եւ կը յարմարցնեն, ինչպէս ուրիշ առթիւ մանրամասն բացատրած ենք: Յետոյ, հասկնալու համար թէ լոյսը լաւ յարմարցուած է, աչքը կը մօտեցնեն ակնամերձին, հայելին քիչ մը կը հակեն, այնպէս որ առարկան կրող հարթակին ճիշտ կեդրոնական ծակին վրայ ցոլայ լոյսը: Նոյնպէս ուշադրութիւն ընելու է որ այդ հարթակին վրայ գտնուած շարժուն ստոծանին որ մէկ-երկու տարբեր խոշորութեամբ ծակեր կ'ունենայ, անոնցմէ մին ճիշդ հարթակի ծակին դիմացը գայ: Մէկ քանի խարխալութեան վերջ, շուտով կրնաք վարժուիլ, եւ գտնալ թէ հայելին որ դիւրքը աւելի նպաստաւոր է, դիտավայրը յարմարագոյն կերպով լուսաւորելու համար:

Եթէ լոյսը շատ զօրաւոր է եւ եթէ քըննուելիք առարկան ալ խիստ թափանցիկ նիւթ մ'է, այն ատեն հարթակին բացուածքը կը պզտիկցնեն, ստոծանին մէկ պզտիկ ծակը անոր դիմացը բերելով: Այս ծակերուն ամենէն պզտիկը կը գործածուի ընդհանրապէս ամենէն մեծ խոշորացումներու համար, իսկ ամենէն մեծը՝ տկար խոշորացումներու համար:

Լոյսի ցոլացումը այսպէս կանոնաւորելէն ետքը, պէտք է նաեւ նոյն իսկ մանրադիտակը կը ճշդել: Հարկ չի կայ ըսել թէ առաջուց աղէկ նայուած ըլլալու է ոսպենիկները մաքուր են թէ ոչ, եթէ չեն, պէտք է խնա-

մով մաքրել, ինչպէս ըսած ենք: Մանրադի-
տակը ճշգրտու համար, նախ վերի ծայրէն
բռնելով, ամբողջ երկայնութեանը՝ դէպ ի
վեր կը քաշեն, որ ինչպէս գրեցինք, դի-
տակներու պէս իրարու մէջ մտցուած երկու
խողովակներէ կը բազկանայ, թէև կը գըտ-
նուին մանրադիտակներ, որոց խողովակը
մէկ կտորէ ըլլայ, բայց այս տեսակներու ակ-
նամերձին և իրացոյցին իրարմէ ունեցած հե-
ռաւորութիւնը շատ քիչ ըլլալով, խոշորա-
ցումն ալ բազմապատկար մի կ'երրորդ անգամ
տկար կ'ըլլայ: Այս դրութեամբ մանրադի-
տակները թէև աժան կ'ըլլան, բայց մեր յի-
շած միակ անպատեհութեան պատճառաւ
յանձնարարելի չեն:

Ուստի՝ մենք այնպէս կ'ենթադրենք որ
գործածուած մանրադիտակը շինուած է
ընդլայնուող դրութեամբ: Այն ատեն՝ խո-
ղովակը ինքնիրեն վրայ դարձնելու է ճիշտ հե-
ղոյոյ (վիտա) մը պէս, խողովակին մէջքին
վրայ գտնուած բոլորածեւ գօտիէն բռնե-
լով, և բարձրացնելու է մինչև որ հարժա-
կէն Չ հարմեղւոր չափ հեռանայ, Յետոյ՝
մանրադիտակի սիւնակին գագաթը գտնուող
մանրաչափական հեղոյսով ճշգրտու է, այս
վերջինին աջ կամ ձախ մէկ քանի շրջան բո-
լորել տալով, մինչև որ յարմարագոյն տեղը
գտնուի:

Մանրադիտակին մէջ նայելու համար,
ընդհանրապէս ձախ աչքը կը գործածեն,
աջ աչքը փոցելով: Թէև ստիկա՝ վարժու-
թեան կամ սովորութեան խնդիր մ'է, որով-
հետև՝ աջ աչքով դիտելէն ալ ու է անպա-
տեհութիւն առաջ չի գար, ինչպէս ոմանք
սովոր են դիտել աջ աչքով: Ըստ մեզ, աւե-
լի լաւ է վարժուիլ, թէ ձախ և թէ աջ աչ-
քով դիտելու: միայն թէ՝ երկու պարագային
մէջ ալ, պէտք է որ աչքին մէկը անպատ-
ճառ գոց մնայ, որովհետև անկարելի է
պատկերացումը յստակ և որոշ տեսնել, երբ
մէկ աչքով կը դիտէք ակնամերձին մէջ, և
միւսով ալ օտար առարկայ մը:

Երբ լուսաւորումը ճշգրիտ յարմարցուի, և
խողովակն ու հեղոյսն ալ լաւ գիրքի մը մէջ
գտնուին, այն ատեն զննութեան ենթար-
կելի առարկան պատրաստելու կը ձեռնարկեն:

Եթէ թիթեռնիկի մը վրայ պիտի կատա-
րէք ձեր ուսումնասիրութիւնը, նախ՝ մըկ-
րատով իր թեւերը կտրել նետելու է, և յե-
տոյ թիթեռնիկին մարմինը սանդիւն մէջ
դնելով, և մէկ քանի կաթիլ ջուր կաթեցնե-
լով վրան, կը տրորեն: Սանդը առաջուց
խնամով մաքրելու է, նաև քանալու է ա-
մէն անգամ որ նոր թիթեռնիկ մը կը գրուի
սանդին մէջ, վրան աւելցած ջուրի քանակը
միշտ նոյնը ըլլայ, որչափ կարելի է ճշգր-
տապէս: Միւսնոյն կերպով կը կատարուի
գործողութիւնը նաև կծիծի կամ թրթուրի
վրայ-ալ, միայն թէ հոս կտրուելիք թեւ
չի կայ:

Երբ միջատը պատշաճ կերպով տրորուած
է, այն ատեն ապակեայ գաւազանիկի մը
ծայրով, կաթիլ մը կ'առնեն, մաքուր ու չոր
իրապանակի մը վրայ կը գետեղեն: Օգտա-
կար կը դատենք ըսել որ գործողութիւնը
պէտք է կատարել խիստ փոքրիկ կաթիլի մը
վրայ, այնպէս որ ապակիին վրայ դրուած
ատեն, հազիւ Չ հազմեղ տրամագիծ ու-
նենայ: այնպէս որ իրափակ ապակին վրան
ծածկուելէն վերջ, մեղմիւ անոր տակը տա-
րածուի, բայց իր եզերքներէն դուրս չի
պոռթկայ:

Իրափակ ապակին գետեղելու համար,
զայն կը բռնեն զուգորդով (չիֆթ) մը, և
զգուշութեամբ նախ մէկ եզերքը կը կտրեն-
ցնեն տակի ապակիին, յետոյ կը թողուն
որ կաթիլին վրայ խնայ մեղմիւ:

Եթէ երբեք այս կանխազգուշութիւնը
ձեռք չառնուի, և խոշոր կաթիլ մը դուրս
չերտակին վրայ, և ծածկուելէն վերջն ալ
իրափակին եզերքներէն դուրս պոռթկայ,
զննութեանն առաջ կամ վերջը, երբ պատ-
րաստութիւնը տեղափոխել ուզուի, այն ա-
տեն՝ առանց կասկածի, իրացոյցի ճակատա-
յին ոսպենիկը թրջելով, այլ ևս ոչինչ կը
տեսնուի: Ընդհանրապէս, նոր սկսնակները
այսպիսի ճախաւերութիւններ գործադրելով,
գործիքին մէջ բան մը չեն կրնար տեսնել,
և յուսահատուելով մէկ կողմ կը նետեն զայն,
կարծելով որ գործիքը աղէկ չէ, և կամ
գործողութեան դրութիւնը: Ուստի՝ այսպի-
սիներուն կը յանձնարարենք որ, երբ այսօ-

րինակ անյաջողութեան մէջ գտնուին, առանց յուսահատելու, պատճառները ուշադրութեամբ փնտռեն գտնեն, գործիքը կամ գրութիւնը պարտաւելէ առաջ:

Նկատողութեան առնելու է նաև որ իրաւալը պատրաստութեան վրայ դրուած տտեն, տալը օգի պղպջակ չմնայ: Ուստի ինչպէս վերը ըսինք, նախ իրաւալին մէկ եզերքը կը կռթնցնեն տակի ապակիին վրայ, և յետոյ, մեղմիւ միւս եզերքը վար կ'իջնեն, ճիշտ գիրք մը գոցելու պէս: Ահա այս կերպով, ամենեւին օգի պղպջակ չի մնար տալը:

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

ԱՐԶԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ՊՈՂ. ՊԱՏ

Պատմական և ընդհանուր տեսութիւն. — Պատրաստութիւն. — Գործածութիւն. — Իր տեսակները, և ասոնց ուրոյն յատկութիւնները:

(Շար. թիւ 69 էն)

—o—

Թրքական սրճաղացներու աղօրինները ընդհանրապէս կը դարբենեն ու կը կերտեն պարզ երկաթով, յետոյ եղջիւրի փոշի, ածուխ, աղ և երբեմն ալ անուշադրի աղ իրար խառնելով՝ չաղախ մը կը պատրաստեն, և այդ չաղախով անոնց երեսը ծեփելէ վերջ, կրակի մէջ կը տաքցնեն մինչև մէկ քանի ժամ, ու յետոյ հանելով ջուրի մէջ կը մխեն. այս կերպով անոնց մակերեւոյթը կը պողպատանայ: Եթէ հալած երկաթի ձուլածոյի մէջ երկաթի կտոր մը մխէք, և անկէ հանելով խկոյն ջուրի մէջ մխէք, այդ երկաթի մակերեւոյթը կը պողպատանայ, ձուլածոյի բնածուխէն մաս մը իր ծակտիկներուն մէջ մտնելով: Քանի որ չաղածոյ պողպատացուած միջոցներուն վրայ կը խօսինք, բացատրենք

նաև ուրիշ գրութիւն մ'ալ որ շատ պարագաներու մէջ կրնայ օգտակար ըլլալ: Եթէ երկաթի մը ծայրին վրայ ձուլածոյի բարակ կտոր մը գնելով, կրակին մէջ երկուքը մէկէն տաքցնէք մինչև այն աստիճան որ ձուլածոն հալելով (ձուլածոն պարզ երկաթէն շատ կը հալի) երկաթին երեսը դրուագէ, և այդ միջոցին անմիջապէս կրակէն դուրս հանելով և երեսը շուտով մը մաքրելով պաղ ջուրի մէջ ընկղմէք, այն աստիճան կարծրութիւն մը կ'ստանայ, որ անոր ոչ մէկ պողպատ կրնայ հաւասարիլ իր կարծրութիւնով կամ անմաշելիութեան յատկութիւնով: Որպէս զի ձուլածոն երկաթին ամէն կողմը հաւասարապէս տարածուի, պէտք է ոսկերորակի (թէնէքեար) փոշի ցանել վրան: Ոսկերորակը երկաթէ թիթեղի (սաճ) մը վրայ նախ կ'այրեն, յետոյ կը փոշիացնեն և ջուրի մէջ հալեցնելով, այդ լուծոյթը կը քսեն՝ փոխանակ պարզ փոշիին: Թուրքիացի երկաթագործները երբ սալ (էօրս) շինեն, երկաթին երեսը բնական պողպատ կը զօդեն, մինչդեռ Եւրոպայէն եկած սալերը կը դարբենեն նախ ընտիր կակուղ երկաթէ, և երեսը շտկելէն վերջը, իր ծաւալին չափով երկաթ թիթեղէ անտուկ մը կը շինեն, որու յատակը կը ծածկեն 5-6 հարմեղր թանձրութեամբ ածուխի բարակ փոշիով, սալը գլխիվայր կը զետեղեն փոշիին վրայ. և վրան կոխելով, զայն կ'ընկղմեն փոշիին մէջ՝ մինչև 1 ու կէս կամ 2 հարմեղր. յետոյ բոլորտիքը շտկելով, անտուկին մինչև բերանը փոշիացած կաւ կը լեցնեն՝ բոլորովին սալը ծածկելով, և անոր վրայ ալ կրկին ածուխի փոշիով կը ծածկեն, և լաւ մը կը ճնշեն ամէն կողմէն, որ օդ առնելու տեղ չմնայ: Երբ այսպէս պատրաստ ըլլայ, այն ատեն երկաթի փուռի մէջ գնելով անտուկը, կրակը կը վառեն, և շարունակ մէկ քանի օր կը տաքցնեն. անկէ վերջը դուրս հանելով՝ փուռէն, ջուրի մէջ կ'ընկղմեն: Թէև այժմ մեծ մասամբ սալերը կը պատրաստեն ձուլածոյ պողպատով:

Գործատանց մէջ չաղածոյ պողպատը կը պատրաստեն հետեւեալ կերպով:

Շաղախման համար գործածուած ամենէն

խնայողական և սովորական նիւթը՝ ինչպէս վերի բացատրութեանց մէջ տեսանք, պարզ ածուխի փոշին է, և սովորաբար ընդունուած դրութիւնն ալ՝ զոր կը կիրարկեն ցարդ, պարզապէս երկաթի շերտերը ածուխի փոշին մէջ թաղելով, և տաքութեան օգնութեամբ ալ՝ երկաթին ծակալիկները բանալ տալով, բնածուխը անոնց մէջ հաստատելն է։ Ուստի ածուխի փոշին հետ կը խառնեն մօխի՝ 100ին 5 համեմատութեամբ, կամ նոյնչափ ող. ուրիշներ՝ ածուխի փոշին կը խառնեն եղջիւրի փոշի, կամ մուր (գուրում), բորակ ևլն. ուստի ալ այդ նիւթերու ամենէն որոշեալ քանակութեամբ իրար խառնելով, կ'աւելցնեն ածուխին վրայ։

Փուռին յատակը կը ծածկեն նախ, 5-6 հար.մեզր բարձրութեամբ ածուխի փոշիով, որու վրայ կը շարեն կարգ մը երկաթի ձողակներ, յետոյ ածուխի փոշի, և այսպէս յաջորդաբար, խառ մը ածուխի փոշի, կարգ մը երկաթ։ Ուրիշներ երկաթեայ թիթեղէ սնտուկներ կը շինեն, շերտակներուն երկայնութեան չափով, և վերայիչեալ եղանակով կը լեցնեն զանոնք, կարգ մը ածուխի փոշիով, և անոր վրայ ալ երկաթէ խուփ մը։ Սնտուկները կը զետեղեն փուռին մէջ, և մինչեւ 6էն 8 օր շարունակ կը տաքցնեն։ Զսպանակի և սղոցի համար գործածելի շաղածոյ պողպատները քիչ կ'եփեն՝ կակուղ մնալու համար. իսկ գրոց, մկրատ և ուրիշ կարծր գործիքներու համար՝ աւելի երկարատեն կ'եփեն։ Սակայն եթէ երկաթները շատ հաստ ըլլան, և կամ, եթէ գործողութիւնը անկանոն կերպով կատարուի, պողպատացումը անկատար կ'ըլլայ, և շերտակներուն մինչեւ կեդրոնը չի թափանցեր։ Այս է պատճառը որ երբեմն այդ պողպատներու երեսը մինչեւ որոշեալ թանձրութեամբ պողպատացած կ'ըլլայ, իսկ իրենց կեդրոնը երկաթի պէս նեարդներ կը ներկայացնեն։ Այս պողպատը ժամանակ մը Պոլսոյ հրապարակին վրայ կը կոչուէր «Փրանսական պողպատ», որ բնական պողպատէն աւելի դժուար կը դարբնուի, և դժուար կը զօդուի երկաթի կամ ինքնիրեն։

Ինչպէս որ երկաթը ածուխի մէջ թաղե-

լով և երկարատեն եփելով կը պողպատանայ, այնպէս ալ՝ պողպատը կարելի է կրկին երկաթի փոխարկել, զայն երկաթի ժանգոտած խարտուածքի կամ փոշիի մէջ թաղելով և եփելով։

Անցողակի ըսենք որ այս դրութիւնը աւելի օգտակար եղած է երկաթէ ձուլածոները կակուղցնելու, քան պողպատները երկաթացնելու։

Գիտութիւնը այն ատիճան մըում տուաւ արհեստներուն, որ այսօր երկաթագործին կամ դարբինին աշխատութիւնները վերջին ծայր դիւրացուցած և թեթեւցած է։ Ժամանակ մը դարբինը կզպանք մը շինելու համար, անոր ամէն մէկ մասերը դարբնելով կը պատրաստէր, և յետոյ գործատեղանին վրայ զանոնք կը ձեւաւորէր խարտելով, քերելով, տաշելով, ծակելով ևլն. բայց այսօր դարբինին բոլոր այդ աշխատութիւնները ձուլագործը սպաննած է, և երբ դարբինը հազիւ թէ կրնայ 2-3 ժամուան մէջ շնորհքով բանալի մը կերտել, անդին ձուլագործը հազարներով կը պատրաստէ միւլեոյն ժամանակամիջոցին մէջ։ Բանալիները կը ձուլուին պատրաստ կաղապարներու մէջ, յետոյ զանոնք փուռի մէջ կը կակուղցնեն, կը հանեն, կը մաքրեն, և ծրարելով կը յանձնեն վաճառականին։ Այսպէս նաև կզպանքին բոլոր միւս մասերն ալ, որով դարբինին ուրիշ բան չի մնար ընել, բայց եթէ այդ մասերը իրենց տեղերը յարմարցնելով կզպանքը կազմաւորել, թէև մեր Թուրքիացի դարբինները տալիսին կզպանքի մը մասերուն գրեթէ ամբողջութիւնը ձեռքով կը պատրաստեն, բայց ի բանալիէն, զոր պատրաստ կը գնեն այժմ։

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

Ա. Զ. Դ

Հ. Երամեանի «Գիտութեանց ու Արուեստից Բառգրքին» կարեւորութիւնը դարձեալ կանխորոշութեան կը յանձնենք։

ԺԻՒՆՆԱԿ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Բայց երբ հասկացաւ թէ խնդիրը դանկա-
կան մղոնի շուրջը կը դառնայ որ քսանըջորս
հազար ոտքի հաւասար է, այն տուեան հա-
մուլեւեցաւ որ եօթ ութ օրուան մէջ հազիւ
կարելի պիտի ըլլայ հասնիլ ու պարտաւորե-
ցաւ նախորդ հաշիւը փոխել:

Չորս ձիերու պէտք ունէինք, երկուքը
մօրեղբօրս և ինծի՝ հեծնելու համար, և միւս
երկուքն ալ մեր գոյքերը փոխադրելու, իսկ
Հանս, ըստ իր սովորութեան, քսելով պիտի
հետեւէր մեզի. և սրովհետեւ այդ կազմերը
լաւ կը ճանչնար, խոստացաւ մեզի ամենէն
կտրուկ ճամբաներէն առաջնորդել:

Մօրեղբօրս հետ Հանսի կնքած պայմա-
նաժամը, մինչեւ Սթարի հասնելով չէր լրա-
նար, այլ պարտաւոր էր անիկա, իր ծառա-
յութեան մէջ մնալ, որչափ առեն որ տեւէր
մեր գիտական արշաւը: Իբր վարձք պիտի
ստանար շարաթը երեք ուիքսթալ (դանիա-
կան դրամ մը որ կ'արժէ մօտաւորապէս 75
դահեկան), միայն թէ ամէն շաբաթ իրիկուն
պիտի վճարուէր այս գումարը. պայման մը՝
զոր պէտք էր գործադրել առանց առար-
կութեան:

Յունիս 16ին պիտի մեկնէինք, այսպէս
որոշուեցաւ: Մօրեղբայրս ուզեց կանխավճար
մ'ընել որսորդին, բայց սա՝ մերժեց մէկ
բառով:

— «Էֆղեր» ըսաւ:

— «Վերջը» ըսել կ'ուզէ, ըսաւ բրօֆէ-
սէօրը, որպէս թէ ինծի սովորեցնել ուզէր:

Պայմանագրութիւնը կնքուելուն պէս,
Հանս, մէկ ստուումով հեռացաւ:

«Ահա՛, սքանչելի մարդ մը, գոչեց մօրեղ-
բայրս. բայց տեղեկութիւն չունի տակաւին

այն շահեկան դերին վրայ զոր պիտի կո-
տարէ ապագային մէջ:

— Ըսել է մեզի պիտի ընկերակցի մի-
ջեւ...:

— Այո՛, Աքսէլ, մինչեւ երկրիս կեդրոնը:
Տակաւին 48 ժամ ունէինք մեկնելու,
հակառակ իմ ծանր մօտաանջութեանս,
պարտաւորած էի ամբողջ այդ ժամանակը
ճամբորդութեան պատրաստութիւններով ան-
ցընել: Բոլոր մեր ճարտարութիւնը թափե-
ցինք առարկաները ամենէն պատշաճագոյն
կերպով տեղաւորելու համար, խոշոր գոր-
ծիքները մէկ կողմ, զէնքերը միւս կողմ,
մանր գործիքները այս ծրարին մէջ, սնուն-
դեղէնները միւսին մէջ, ամէնքը չորս կտոր,
Գործիքներու ծրարը կը պարունակէր:

1. — Էկէլի հարկւարդ ջերմաչափ մը, որ
մինչեւ 150 աստիճան կը ցուցնէր, բոլոր ին-
ծի չափազանց կտր անբաւական կ'երեւէր:
Չափազանց՝ վասն զի շրջապատող տաքու-
թիւնը մինչեւ հոն չբարձրացած, արդէն
մենք տապկուած պիտի ըլլանք: Անբաւական
պիտի ըլլար, եթէ երբեք պիտի գործա-
ծէինք չափելու համար, աղբիւրներու և
ուրիշ կարգ մը նիւթերու բարեխառնութիւ-
նը որոնք արդէն հրահալ վիճակի մէջ են:

2. — Ճնշուած օդով անգայտաչափ մը որ
լարուած էր՝ ովկիանոսին մակերեսի մթնոլոր-
տի ճնշումներէն աւելի բարձր ճնշումները
ցուցնելու համար: Եւ արդարեւ սովորական
ծանրաչափը բաւական չափով ըլլար, ցուց-
նելու մթնոլորտի ճնշումը որ աստիճանաբար
պիտի սաստկանար, որչափ երկրիս խորը իջ-
նէինք:

3. — Ժընէվցի երկտասարդ Պուսսօնայի
ժամանակաչափ մը զոր կատարելապէս ճշ-
դուած էր Համպուրկի միջօրէին վրայ:

4. — Երկու կողմնացոյց՝ հակաւմները և
խոտորումները չափելու համար:

5. — Գիշերային գիտակ մը:

6. — Ռիւմֆօրթի երկու կապնած որ երեք-
տրական հոտանքով մը կրնային շատ կանո-
նաւոր, պայծառ և գիւրատար ըլլա մ'ար-
տադրել (*):

(*) Ռիւմֆօրթի կապնածը կը բաղկանայ
հետեւեալներէն. Պէօնզանի բարդ մը՝ (բել)

Ձէնքի պայուսակին մէջ կային հետեւեալները, Բիրաշէյ Մըր և Ընկ.եան երկու քարապիւններ, Գոլդի երկու վեցհարուածեան, Բայց ինչո՞ւ գէնքեր ունենայինք հետերնիս, ինչո՞ւ այդ աւելորդ ծանրութիւնը, ասոր խելքս չէր հասներ, քանի որ ո՛չ գիշատիչ գազաններու և ո՛չ ալ վայրենիներու պիտի հանդիպէինք: Բայց կ'երեւէր թէ մօրեղբայրս բնագիտական գործիքներուն չափ կարեւորութիւն կու տար իր գէնքերուն:

Մասնաւորապէս խոնաւութենէ չխաթարող մեծ քանակութեամբ բամպակի վառօդ կար պայուսակին մէջ:

Երկրաբանական գործիքներու բաժնին մէջ կար, երկու սրածայր մուրճ, երկու բրիչ, կալիի երկքուստտով (պի քուստտ տը բօթաս) որ ունէ անախորժ հոտ չի բուրէր:

Մակածող թելաւ մը (պօպիւն տէնտիւք-սիօն) բարդէն արտադրուած ելեքտրականութիւնը հաղորդակցութեան մէջ կը դնէ, մասնաւոր կերպով սարքուած լապտերի մը հետ:

Այս լապտերին մէջ կայ օձագալար աւակեայ խողովակ մը որուն մէջի օդը պարպուած ըլլալով՝ միայն անկենդանի կամ բնածուխի մնացորդ մը կայ: Երբ կազմածը բանի, օձագալար խողովակին մէջի կազը լուսաւորելով, ձերմակ և յարատեւ լոյս մը կ'արտադրէ: Բարդը և թելաւը զետեղուած են, կաշիէ պայուսակի մը մէջ զոր ճամբարդը կռնակին վրայ կը կրէ փոկերով: Լապտերը պայուսակէն դուրս մնալով, ամենէն խաւար մթութիւններու մէջ անգամ գոհացուցիչ կերպով կը լուսաւորէ: Այս լապտերը կարեւոր առաւելութիւն մ'ունի ուրիշ գրութիւններու վրայ. ամենէն դիւրաւառ կապերու մէջ անգամ առանց պայթում յառաջ բերելու կը վառի. որովհետեւ՝ լոյսը անոնց հետ չիման մէջ չի գտնուիր, և ամենէն խոր ջուրերու յատակը անգամ մարելու վախ չունի, որով և ամենայն փտահութեամբ կարելի է առաջնորդուիլ այդ տեսակ փտանգաւոր պարագաներու մէջ: Մ. Ռիւմօռֆ գիտուն և ճարտար բնագէտ մ'եղած է: Իր ամենէն մեծ գիւտը եղած է այս մակածութեան թելաւը, որուն շնորհիւ, շատ դիւրութեամբ զօրաւոր ձգտումով ելեքտրականութիւն կրնայ արտադրել: 1864ին ստացած է հնգամենի 50,000 Փրանքի մրցանակը, զոր Յրանսայի կառավարութիւնը վերապահած էր, ելեքտրականութեան կիրարկման մասին ամենէն ճարտարագոյն գիւտին:

մէկ մետաքսեայ ելարան, երեք երկաթապատ գաւազաններ, կային մը, կռան մը, 12 հատ երկաթէ երիթներ և օղակներ, և շատ մը հանգուցաւոր երկայն պարաններ: Ասով հանդերձ այնչափ խոշոր ծրար մը չէին կազմեր այս ամէնքը, արդէն անոնց մէջ էն խոշորը որ ելարանն էր, 300 ոտք երկայնութիւն ունէր:

Վերջապէս պաշարի ծրարը կար որ նոյնպէս արտասովոր խոշորութիւն մը չունէր թէ և, բայց վեց ամիս տեսելու չափ պարէն կը պարունակէր, և կը բաղկանար խոտացեալ միսէ և չոր պաքսիմատէ: Իբր ըմպելի ունէինք մի միայն գեօղի (ժըփէվոը): Ջուր չունէինք, բայց պարապ դիւակներ կար քովերնիս: Մօրեղբայրս զանոնք լեյնելու համար, ճամբան պատահելիք աղբիւրներու վրայ յոյսը դրած էր: Այդ պատահական աղբիւրներու սրակին, բարեխառնութեան, և մինչեւ իսկ՝ անոնց չգոյութեան վրայ թէ և դիտողութիւններ ըրի մօրեղբօրս, բայց առանց պատասխանի թողուց զիս:

Մեր ճամբարդութեան պիտոյքներուն մէջ կը գտնուէր նաև դիւրատար դեղարան մը որ կը պարունակէր սրածայր մկրատներ, բաւակ տախտակներ, մեր մարմնոյն կոտրած մասերը կոպելու համար: Վիրակապ, վէրքի բարձիկներ, խորաններ, արիւն առնելու գործիքներ, և ի՞նչ գիտնամ տակաւին ի՞նչ սոսկալի բաներ: Աւելին կայ, աջարտուղ (dextrine) պարունակող շատ մը շիշեր, վիրադեղի ալքօլ, կապարային քացախատի լուծոյթ, եթեր, քացախ և անուշադր. ասոնց ամենէն ալ մէյմէկ քիչ կը գտնուէր որոնց գործածութիւնք պարագան մարդ երբ միտքը բերէ, ապահովաբար կը վրդովի:

Չմոռնամ ըսելու որ ասոնց քով կը գտնուէր նաև Ռիւմօռֆի կազմածներուն համար յարկաւոր նիւթեր:

Մօրեղբայրս ծխախոտի պաշարը մոռցած էր, ոչ ալ վառօդ և արեթ: Կաշիէ գօտի մը կը կրէր մէջքին վրայ որ կը պարունակէր դրամ և թուղթ:

(Շ-ը-ն-ի-է)

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒՎԵԱՆ

ԹԷՑԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Չինական, Հնդկական և Ճարճական ամենաընտիր տեսակէ եղող արտագրութիւնները պիտի գտնէք ապահովաբար վերոյիշեալ պատուաւոր վաճառատան մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարութիւնները փութով և ճշդիւ կը կատարուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ճէլալ Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճառատան ապրանքները ժողովուրդէն գընահատուած ըլլալով, շատեր անոնց կեղծը հրապարակ հանած են. ուստի զգուշանալու համար, վերոյիշեալ վաճառանիշին տակ Կ. Եւփրուեան և Յ. Իսագուլեան ստորագրութիւնը փնտռեցէք:

ԳԱՂ. ՀԱՅ - ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՅ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կու տայ ընդհանուր գիտական, բժշկական, երկրագործական և այլ կարեւոր նիւթերու վրայ:

Կը յանձնարարուի, ոչ միայն այդ մասնաճիւղերով զբաղող անձանց, այլ մինչև իսկ, և ա՛լ աւելի դպրոցական տղայոց. Գիտական բառերը, երբ իրենց քով պատշաճ մեկնութիւններ չունին,

անթափանցելի և անհասկանալի կը մնան, և շատ անգամ ուսանողը երկբայութեան մէջ կը թողուն. Վեր. Հ. Ս. Երամեանի այս նոր հրատարակող բառգիրքը՝ ոչ միայն այդ բառերու հակերճ մեկնութիւնները կու տայ, այլ և անոնց կարեւորագոյն մասին՝ խնամով պատրաստուած պատկերներն ալ դրած է. ուստի՝ փութացէք առիթէն օգտուիլ, քանի որ տակաւին բաժանորդագրութիւնը աժան է, և ամէն քսակի համար ալ գիւրտմատչելի:

Մինչեւ տպագրութեան աւարտիլը՝ բաժանորդագրութիւնը 10 ֆրանք է. թղթատարութեան ծախքով 12.50 ֆր.: Յաւարտ տպագրութեան, գինը կը բարձրանայ 15 ֆրանքի:

Խմբագրութիւնն՝ կ'ստանձնէ կանխիկ վճարուած յանձնարարութիւնները:

„ԱԴԱՄ“

«ԴԱԼԷՏԵՐԵԱՆ ՆՈՐԱԳԾԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ» տնտեսով այն գործը վերջապէս սկըսու հրատարակուի, որ կ'ուսուցանէ արանց և մանչ տղոց ամէն տեսակ հագուստներ, ինչպէս նաեւ ՕՍՄԱՆԵԱՆ զինուորական ու քաղաքացին համազգեստներ ՁԵԻՆԼՈՒ և ԿԱՐԵԼՈՒ եղանակը, բոլորովին նորագոյն և խիստ դիւրամբողջ մեթոտով մը:

Գնողներուն դիւրամատչելի ըլլալու համար՝ ընդհանուր գործը բաժնուած է 3 հատորներու: Ա. հատորը կը պարունակէ բոլոր «Դալեայով» հագուստները, իրենց ամբողջ մանրամասնութեամբը: Գործն ընտիր թղթի վրայ, գեղատիպ 200 մեծագիր էջէ և 48 վիմատիպ տախտակներէ կը բաղկանայ, 250է աւելի արտայայտիչ օրինակներով ու պատկերներով: Իր գերազանց առաւելութիւնն այն է որ՝ ՉԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ եօթ, ինն կամ տասնեւմէկ չափով ձեւել կ'ուսուցանէ ամէն կազմուածքի վրայ: Ա՛լ աւելի մատչելի ըլլալու նպատակաւ, Ա. հատորին բաժանորդագրութիւնը բացուած է միայն 3 ամսուան համար կէս օամ. սակի՝ կանխիկ, թղթատարի ծախքով 60 դահեկան:

Դիմել Մ. Գալէնտէր. Թարագճըլար փողոց, թիւ 49, Կ. Պոլիս:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հանրագիտակի կը հրատարակուի առ այժմ չարթը անգամ մը. իր նպատակն է գիտութիւնները ռամկացնել, եւրոպական արհեստներու, արուեստներու, ճարտարարուեստներու, երկրագործութեան ելն. գրութիւններն աւելորդութիւնները ծանօթացնել գործնական բացատրութիւններով:

Հանրագիտակի իր յառաջգիմութիւնը ժողովուրդին յառաջգիմութեան մէջ, իր իսկական շահը՝ հանրութեան մէջ փնտռել՝ իրեն միակ նպատակ ըրած ըլլալուն, հաստատած է հարց-պատասխանի գրութիւն մը, որու օգտակարութիւնը փորձով հաստատած են մեր յարգոյ բաժանորդները:

Հանրագիտակի կը պատասխանէ գրականութեան աշխատանքին հարցումներու, որոնք կը վերաբերին երկրագործութեան, Անտանտալ ծովի, Արհեստագիտութեան, ճարտարարուեստի, Առանձին անտեսութեան և իրենց յարակից ճիւղերուն:

Եթէ տրուելիք պատասխանները թերթիս պարունակութեանց մաս կազմեն, որոցմէ հանրութիւնը և երկիրը կրնայ օգտուել, խմբագրութիւնս ու է փոխարինութիւն չի պահանջեր:

Ուղղուած հարցումներու մէջէն, ամենէն առաջ կը պատասխանուի անոր, որ հանրային շահուն հետ անմիջական կապակցութիւն ունի. մնացեալներուն կը պատասխանուի յարմարագոյն առթիւ:


Կը պատասխանուի մի միայն այն հարցումներուն, որոնք կ'ուղղուին Հանրագիտակի Պատ. բաժանորդներու կողմէ:

Տրուած պատասխանները չահեկան և օգտակար կերպով ներկայացնելու համար, ուղղուած հարցումներու կարե-

ւորներուն մանրամասն և գործնական բացատրութիւններ կը տրուին, որ կըրնայ երբեմն յապաղում պատճառել, բայց վերջապէս ուշ կամ կանուխ կը պատասխանուի: Այս պատճառաւ պէտք չէ մենե անմիջական պատասխան խնդրել:

Անոնք որ իրենց զբաղումին վերաբերեալ ու է հարցում կ'ուղղեն խմբագրութեան, և կ'ուղեն պատասխանը միայն իրենց վերապահել, պէտք է մասնաւոր սակարկութեամբ, և հարցումի կարեւորութեան համեմատ վճարում մ'ընեն:

Եթէ պատահի հարցում մը, որ թերթիս ծրագրէն դուրս ըլլայ, և պատասխանը ստանալու համար մասնագէտներու կարծիքին պէտքն զգացուի, ծախքը և այլ մասնագէտներու պահանջած փոխարինութիւնը պէտք է ընէ՝ հար-



կընդունի այն ամէն անգամ, երբ խմբագրութիւնը, որոնք հանրութեան համաձայն հան-

րը աշխատակիցներուն կը նուիրէ առ այժմ թերթ մը: Թերթին յառաջգիմութեան հետ մտադիր է նաեւ դրամական փոխարինութիւն ընել ապագային:

Հանրագիտակի իր բաժանորդներուն կողմէ եղած յանձնարարութիւնները կը կատարէ. եթէ փոխարժէքը կանխաւ յանձնարարութեան հետ զրկուի:

Հանրագիտակի կ'ընդունի ամէն տեսակ ծանուցումներ և ազդարարութիւններ, խիստ դիւրամտօղջի պոյժաններով:

Հեղինակներ և հրատարակիչներ, որք կ'ուղեն արժանապէս գրագատուել կամ գնահատուել, պարտին Յակոբ օրինակ զրկել խմբագրութեանս իրենց գործերէն: